Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ՝ 0.5 դրույքային միավոր
2. Երաժշտության դաստիարակ՝ 0.75 դրույքային միավոր
3. Դաստիարակ՝ 1,17 դրույքային միավոր
4. Դաստիարակ՝ 1,17 դրույքային միավոր
5. Դաստիարակ /հերթապա ՝ 0,59 դրույքային միավոր
6. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ՝ 0,5 դրույքային միավոր

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մեթոդիստի՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալի որակավորման պահանջները՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց):

Դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դիմող քաղաքացիները «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Ֆիզկուլտուրայի հրահանգչի որակավորման պահանջները՝ հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունե միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. հուլիսի 14-ից օգոստոսի 10-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից 17:00-ն:

Մեթոդիստի, դաստիարակի, հերթապահ դաստիարակի թափուր պաշտոնների մրցույթը կկայանա 2026 թվականի օգոստոսի 13-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում /հասցե՝ գ. Հայթաղ, Բաղրամյան 3/:

Երաժշտության դաստիարակի թափուր պաշտոնի մրցույթը կկայանա 2026 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում /հասցե՝ գ. Հայթաղ, Բաղրամյան 3/:

Ֆիզկուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնի մրցույթը կկայանա 2026 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 14:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում /հասցե՝ գ. Հայթաղ, Բաղրամյան 3/:

Տեղեկությունների համար զանգահարել 098 84 24 27 հեռախոսահամարով:

Հասցե՝ գ. Հայթաղ, Բաղրամյան 3

Էլ. հասցե՝ haytaghimankapartez@mail.ru